

«ՄԱԿ-ի զարգացման ծրագիր» Հայաստանյան գրասենյակ

Երևան քաղաքի №118 մանկապարտեզի շենքի
սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
(լրամշակված տարբերակ)

Կատարող՝

«Քոնսեկուարդ» ՍՊԸ

Տնօրեն՝

Վ. Թևոսյան

Երևան - 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____	4
2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ _____	6
3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ _____	9
3.1. Տեղեկատվություն ձեռնարկողի մասին _____	9
3.2. Նախատեսվող գործունեության անվանումը եւ նպատակը _____	10
3.3. Ճարտարապետական հիմնական լուծումներ _____	10
3.4. Զրամատակարարում և ջրահեռացում _____	13
3.5. Զերմամատակարարման համակարգ _____	14
3.6. Արտաքին և ներքին էլեկտրամատակարարման համակարգ _____	15
3.7. Հակահրդեհային ազդանշանման համակարգ _____	17
3.8. Տեսահոսկողության համակարգ _____	18
3.9. Արևային ֆոտովոլտային համակարգ _____	18
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ) _____	19
4.1. Գոյություն ունեցող իրավիճակը _____	19
4.2 Նախապատրաստական աշխատանքների բնութագրերը _____	20
4.3 Հիմնանորոգման տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները _____	20
4.3.1 Սեյսմազինվածության ավելացում _____	20
4.4 Շինարարական աշխատանքների կազմակերպում _____	21
4.5 Աշխատանքների անվտանգության իրականացման սարքեր և կանոններ _____	22
4.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում _____	26
5 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____	28
5.1 Տարածքի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները _____	28
5.2 Կլիմայական պայմանները _____	30
5.3 Մթնոլորտային օդ _____	31
5.4 Զրային ռեսուրսներ _____	33
5.5 Հողային ռեսուրսներ _____	33
5.6 Կենսաբազմազանություն _____	34
5.6.1 Բուսական աշխարհ _____	34
5.6.2. Կենդանական աշխարհ _____	35
5.7 Սոցիալ տնտեսական պայմանները _____	36
6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	38
6.1 Ռիսկերի գնահատում _____	38
6.2 Օդի աղտոտում _____	38

6.3	Աղմուկի ազդեցություն _____	39
6.4	Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն _____	39
6.5	Կենսաբազմազանություն _____	39
6.6	Բնապահպանական միջոցառումներ _____	39
6.6.1.	Մթնոլորտային օդ _____	40
6.6.2	Ջրային ռեսուրսներ _____	41
6.6.3	Հողային ռեսուրսներ _____	41
6.6.4	Աղմուկ _____	42
6.6.5	Կենսաբազմազանություն _____	42
6.6.6.	Սոցիալական մեղմող միջոցառումներ _____	43
6.6.7	Թափոնների կառավարում _____	44
6.6.9	Աշխատանքի անվտանգություն և առողջություն _____	46
6.6.10	Փոխհատուցում _____	47
7.	ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ _____	48
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ _____	49
8.	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ _____	54
	ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____	56

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՄԱԿ»-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի №118 մանկապարտեզի սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման նախագծի մշակումը: Սույն գործունեության ձեռնարկողն ու պատվիրատուն հանդիսանում է Երևանի քաղաքապետարանը: Նախագծի մշակումը կատարվել է «ԱՍ նախագիծ» ՍՊԸ կողմից՝ քաղաքաշինության կոմիտեի կողմից՝ տեխնիկական բնութագրի և նախագծային առաջադրանքին համապատասխան: Գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել քաղաքաշինության կոմիտեի հետ կնքված պայմանագիրը:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Մանկապարտեզի շենքի սեյսմիկ կայունության բարելավման և սույն գործունեության իրականացման համար մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրության և նախնական գնահատման» սույն փաստաթուղթը: Փաստաթուղթը մշակվել է որպես սույն գործունեության բնապահպանական գնահատման ուղեցույց: Այս փաստաթուղթը ներառում է Ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները և չափանիշները և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ գործունեության իրականացման բոլոր փուլերում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, Երևանի Նոր Նորք վարչական շրջանի №118 մանկապարտեզի սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500մ²-ը (մանկապարտեզի վերակառուցման մակերեսը ընդհանուր կազմում է 15702.0 մ³):

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- շինարարության փուլում մերձակա բնակչությանը /Նոր Նորք վարչական համայնք/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- շինարարական մեքենաների և տեխնիկայի պատճառով տեղի երթևեկության խափանում,
- հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում՝ շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով պայմանավորված աղտոտում,
- հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող շինարարական և կենցաղային աղբով,
- աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- մանկապարտեզի սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման աշխատանքային նախագիծը,
- կառուցապատվող տարածքի վերաբերյալ հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տարածաշրջանի վերաբերյալ ելակետային տվյալների վերլուծությունները, քարտեզները,

- մանկապարտեզի շենքի սեյսմիկ կայունության բարելավման ծրագրի վերաբերյալ շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա մշակվել է նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ անցկացվել են հանրային քննարկումներ,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ, տեսաձայնագրություն) ներկայացում բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և նախագծման քննարկումներ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում:

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Երևան քաղաքի Նոր Մոլոք վարչական շրջանի N°118 մանկապարտեզի սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչները: Հիմքերը ներկայացված են ստորև.

«Սահմանադրություն» (ընդունված 06.12.2015թ.) - 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի» պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրույթային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիաների՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ

պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքին (24.11.2004թ.) Սույն օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման եւ դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաեւ մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական եւ տնտեսական հիմքերը:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար,

ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» N30 արձանագրային որոշումը:

Ուղեցույցներ և ստանդարտներ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2019), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգը, Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

Շինարարության ընթացքում կապահանվեն առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի պահանջները:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

3.1. Տեղեկատվություն ձեռնարկողի մասին

Սույն նախաձեռնության ձեռնարկող է հանդիսանում «ՄԱԿ»-ի Զարգացման ծրագրի գրասենյակը Հայաստանում:

«ՄԱԿ»-ի Զարգացման ծրագիրը գործունեություն է ծավալում աշխարհի շուրջ 170 երկրներում և տարածքներում: «ՄԱԿ»-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հիմնվել է 1993 թվականի մարտին և աջակցում է Հայաստանում կայուն զարգացման նպատակների իրականացմանը:

Կազմակերպության գտնվելու վայրը՝ Երևան-0010, Պետրոս Ադամյան փող., 14 :

3.2. Նախատեսվող գործունեության անվանումը եւ նպատակը

Ներկայացվող գործունեության անվանումն է՝ «Երևանի Նոր Նորքի վարչական շրջանի №118 մանկապարտեզի սեյսմազինվածություն և հիմնանորոգում»:

Շենքը բաղկացած է երկու երկհարկանի՝ նկուղային մասով մասնաշենքերից, և գտնվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի տարածքում: Կառուցվել է 1985 թվականին: Մանկապարտեզի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներում կան անհամապատասխանություններ ՀՀ ներկայումս գործող «ՀՀ ՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» շինարարական նորմերի պահանջներին:

Համաձայն ՀՀ կառավարության 25.12.2014թ. թիվ 1504-Ն որոշման՝ (Լոտ 4) «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում», «ԱՍ նախագիծ» ՍՊԸ մշակել է Երևան քաղաքի Վիլնյուսի փողոց թիվ 121 հասցեում գտնվող №118 մանկապարտեզի սեյսմազինվածության և հիմնանորոգման աշխատանքների նախագիծը:

Նախագիծման հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետի կողմից տրված 29.05.2018 թվականի թիվ №01/18-07/2-36774-364 նախագծային առաջադրանքը /ճարտարապետա-հատակագծային առաջադրանք/: Կառուցապատող է հանդիսանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Հայաստանյան գրասենյակը և Երևանի №118 մանկապարտեզ ՀՈԱԿ-ը:

Մանկապարտեզի հողատարածքը՝ 0.74325 հա մակերեսով, գրանցված է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 20072017-01-0084 վկայականում:

Տարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործման:

3.3. Ճարտարապետական հիմնական լուծումներ

Երևանի №118 մանկապարտեզի սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման նախագծման աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և պատվիրատուի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի համաձայն:

Նախագծով նախատեսվում են ստորև նշված աշխատանքները:

Ապամոնտաժվում են բոլոր միջնորմները, արտաքին ու ներքին դռներն ու պատուհանները, տանիքը, հատակների ծածկույթները, ներքին ինժեներական ցանցերը (ջեռուցման մարտկոցներ և խողովակներ, էլ. լարեր, ջրի խողովակներ), արտաքին աստիճաններն ու աստիճանահարթակները: Այսպիսով՝ շենքում մնում են միայն արտաքին պատերն ու ծածկերը: Համաձայն նախագծի իրականացվում են միջոցառումներ շենքի սեյսմազինվածությունը բարձրացնելու, ջերմային կորուստները նվազեցնելու և էներգախնայությունը բարձրացնելու նպատակով: Արտաքին պատերը ջերմամեկուսացվում են՝ 70մմ հաստ փրփրապոլիուրետանով, սվաղվում են ցեմենտ-ավազի սվաղով, հարդարվում են ճակատային ներկով: Պատուհանների բացվածքների լայնությունը կրճատվում է, տաքանցումների պատերը շարվում են պեմզաբլոկներով և արտաքինից պատվում են փրփրապոլիստիրոլի սալերով, սվաղվում են ցեմենտ-ավազի սվաղով, Bp-Ց3, 50x50 բջջային ցանցի վրա, հարդարվում ճակատային ներկով: Առաջին հարկի բոլոր մուտքերի առջև, բացի ծառայողականներից, իրականացվում են թեքհարթակներ: Երկրորդ հարկի բոլոր խմբասենյակներն ունեն բացահաման ելք՝ մետաղական աստիճաններով: Տանիքը իրականացվում է հարթ, ջերմամեկուսացված, գլանափաթեթային նյութից ծածկույթով՝ կազմակերպված ներքին ջրահեռացումով:

Շենքում նախատեսվում է ջեռուցման և օդափոխության համակարգեր: Նախատեսվում է նոր էլ. սնուցման և էլ. լուսավորության ցանցեր: Տանիքում տեղադրվում են արևային ֆոտովոլտային և արևային ջրատաքացուցիչ համակարգերը:

Վերակառուցումից հետո մանկապարտեզը կունենա.

- տասներեք առանձին խմբային բջիջ
- վարչատնտեսական մաս՝ յուրաքանչյուրն իր խմբասենյակով, ննջասենյակով, սանհանգույցներով և բուֆետով
- մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ
- խոհանոցային մաս
- լվացքատուն
- բժշկի սենյակ՝ մեկուսարանով
- կաթսայատների սենյակներ:

Համաձայն պատվիրատուի կողմից տրված առաջադրանքի՝ բարեկարգման աշխատանքները սահմանափակվում են կառույցի շուրջը մայթի սալվածքի իրականացումով:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Կառուցապատման մակերես - 1780 քմ

Ընդհանուր մակերեսը 0.000 նիշից բարձր - 3120.0 քմ

Ընդհանուր մակերեսը 0.000 նիշից ցածր - 1640.0 քմ

Շինարարության ծավալը 0.000 նիշից բարձր - 10950.0 մ³

Շինարարության ծավալը 0.000 նիշից ցածր - 4752 մ³

Նկար 1. Կառույցի և տեղանքի արժանյակային պատկերը վերևից



Նախագծով նախատեսվում են ինժեներական նոր համակարգեր.

- Արտաքին և ներքին ջրամատակարարման և կոյուղու համակարգ
- Ջերմամատակարարման համակարգ
- Արտաքին և ներքին էլեկտրամատակարարման համակարգ
- Հակահրդեհային ազդանշանման համակարգ
- Տեսահսկողության համակարգ
- Արևային ֆոտովոլտային համակարգ:

3.4. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Վերակառուցվող մանկապարտեզի ջրամատակարարման ներքին համակարգը գտնվում է վթարային վիճակում, ուստի անհրաժեշտություն է առաջացել փոխել ամբողջությամբ՝ ջրամիացումն իրականացնելով նույն մուտքագծից: Ջրամիացման մոտ նախատեսված է կառուցել հոր՝ կլոր կտրվածքի հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից, սեյսմիկ գոտիների համար նախատեսված լրացուցիչ ամրանների ծախսով, կարգավորիչ փականով, ՄՅ2 մմ. տրամաչափի ջրաչափական հանգույցով:

Ջրամատակարարման արտաքին համակարգը նախատեսված է իրականացնել պողպատե էլեկտրաեռակցվող Մ57x3.0 մմ հորի մեջ ՄՅ2 մմ պողպատե ջրագազատար խողովակներից: Ջրամատակարարման խողովակաշարը նախատեսվում է իրականացնել 1.2 մմ միջին թաղման խորությամբ: Նախատեսված է երկու մուտքագիծ: Մուտքագծերի անցքերը պատել ջրագազաթափանցիկ էլաստիկ նյութով: Ջրամատակարարման ներքին ցանցը փակուղային է: Ներքին հակահրդեհային անվտանգությունն ապահովելու նախատեսված է հակահրդեհային ծորակներ: Հակահրդեհային կանգնակը ընտրվել է Մ57x3.5 մմ տրամաչափի պողպատե ջրագազատար, տաք և սառը ջրամատակարարման կանգնակները և սպառման խողովակաշարը՝ DN 32x3.5, DN 25x2.3, DN 20x1.9 պոլիպրոպիլենե խողովակներից: Տաք ջրամատակարարման սնուցումն իրականացվում է մանկապարտեզի խոհանոցի համար նախատեսվող լոկալ արևային պանելային մարտկոցներից՝ տաքացվող երկկոնտուրանի ծավալային ջերմափոփոխանակից, իսկ խմբերի համար 80լ տարողության Արիստոն տիպի էլեկտրական ջրատաքացուցիչի միջոցով:

Տնտեսա-կենցաղային կոյուղի

Համակարգը նախատեսված է սանիտարատեխնիկական սարքերից տնտեսակենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Կոյուղու համակարգի խողովակները նախատեսված են իրականացնել ներքին ցանցի համար D 63մմ և D 110մմ

տրամագծի կոյուղու պոլիվինիլքլորիդե (PVC) լայնուկավոր խողովակներից 21-26-100-80: Կոյուղու հորիզոնական միացումները կատարվում են թեք ձևավոր մասերով: Խոհանոցում խոհանոցային կոնքերի միացումը կոյուղու խողովակին իրականացվում է 2մմ շիթի ընդհատումով: Կոյուղու համակարգի թողարկները նախատեսվում է իրականացնել նույն տեղով և նույն խորությամբ: Կոյուղու գոյություն ունեցող համակարգի համար նախատեսվում է մաքրում մոտ 130մ:

Համակարգը նախատեսված է տանիքի մթնոլորտային ջրերի հեռացման համար:

3.5. Ջերմամատակարարման համակարգ

Երևանի թիվ 118 մանկապարտեզի շենքի ջեռուցման համակարգի վերակառուցման նախագիծը կատարված է համաձայն ճարտարապետա-շինարարական գծագրերի եվ գործող շինարարական նորմերի եվ կանոնների ՀՀՇՆ IV-12.01.04 СНиП 2.0802-89 :

Մանկապարտեզը բաղկացած է չորս առանձին մասնաշենքերից:

Ջեռուցման հաշվարկային ջերմաստիճանը -19°C :

Ջերմության հաշվարկային ծախսը ջեռուցման համար յուրաքանչյուր մասնաշենքի համար հավասար է՝

- N1 մասնաշենքի համար /Ա-Ե 1-13 առանցքներով / $Q=63250$ կկալ/ժ / 73.6 կվտ/,
- N2 մասնաշենքի համար / Ը-Կ 1՝-7՝ առանցքներով / $Q=45000$ կկալ/ժ / 52.3 կվտ/,
- N3 մասնաշենքի համար / Թ-Կ 1՝-7՝ առանցքներով / $Q=45000$ կկալ/ժ / 52.3 կվտ/:

Ջերմության հաշվարկային ծախսը օդափոխության կարիքների համար առաջին մասնաշենքի համար հավասար է $Q= 12\ 000$ կկալ/ժ / 10.4 կվտ /: Որպես ջերմության աղբյուր հանդիսանում են կաթսայատեղում տեղադրված երկու կոնդենսացիոն գազային կաթսաններ, առաջին մասնաշենքի համար 50 կվտ հզորությամբ, իսկ երկրորդ և երրորդ մասնաշենքերի համար 32 կվտ հզորությամբ:

Նախագծով նախատեսված է իրականացնել մանկապարտեզի ջրատաքացուցիչ կաթսանների գազիֆիկացման նախագիծ: Որպես միացման կետ արտաքին գազատարի համար հանդիսանում է գոյություն ունեցող գազային հաշվիչի հանգույցը: Արտաքին գազատարը անց է կացվում մասամբ մանկապարտեզի ցանկապատի վրայով և շենքի պատի վրայով: Գազի մոնիտաժը իրականացվելու է պողպատյա գազատար խողովակներով:

Գոյություն ունեցող հին կաթսայատեղերում տաս մի կոնտուրանի գազի կաթսանները 25 կվտ հզորությամբ ապամոնիտաժվում են: Նախագծված է երեք անհատական ջեռուցման համակարգեր յուրաքանչյուր մասնաշենքերի համար: Ընդունված է ջրային, երկխողովականի ջեռուցման համակարգ՝ ջրի համընթաց շարժումով:

Մայրուղի և հետադարձ խողովակագծերը անց են կացվում նկուղու առաստաղի տակով: Որպես ջեռուցման մարտկոցներ ընդունված են այլումինե սեկցիոն մարտկոցներ H=500մմ: Գոյություն ունեցող մարտկոցները ապամոնտաժվում են և մոնտաժվում վերախմբավորումով: Զեռուցման համակարգը մոնտաժվում է պոլիպրոպիլենե խողովակներով: Բոլոր մարտկոցների առերիչների վրա տեղադրվում են ջերմակարգավորիչ և անջատիչ փականներ: Համակարգից օդի հեռացումը իրականացվում է ավտոմատ օդահան ծորակների միջոցով, որոնք տեղադրվում են երկրորդ հարկի մարտկոցների խցանի վրա: Գոյություն ունեցող ջեռուցման համակարգը ապամոնտաժվում է, օգտագործում ենք միայն այլումինե մարտկոցները վերախմբավորումով:

Մանկապարտեզում նախագծված է ներածող - արտածող մեխանիկական և բնական օդափոխություն: Տաք արտադրամասում համաձայն տեխնոլոգիական առաջադրանքի իրականացվում է տեղական արտածում արտադրական սարքավորումներից: Արտածումը կազմակերպվում է ԱՀ-1 համակարկի միջոցով ` БКПФ 4Е կենտրոնախույս օդափոխիչի միջոցով, որը տեղադրվում է տաք արտադրամասի առաստաղի տակ: Տաք արտադրամասի ներածումը իրականացվում է ՆՀ-1 համակարգի միջոցով ` ПА-02В կախովի ներածման կայանքի միջոցով, որը տեղադրվում է տաք արտադրամասի առաստաղի տակ: Խոհանոցի սպասկի լվացման արտադրամասի արտածումը իրականացվում է առաստաղի տակ տեղադրված БКПФ 4Е կենտրոնախույս օդափոխիչի միջոցով: Լվացքասենյակի օդափոխությունը կազմակերպված է БО-4М 300 առանքային օդափոխիչի միջոցով: Սանհանգույցների օդափոխությունը իրականացվում է կանալային ТТ-125 օդափոխիչի միջոցով: Խմբասենյակներում, ննջարաններում, հանդիսությունների դահլիճում օդափոխությունը կազմակերպված է օդի ներածման-արտածման ռեկուպերացիոն УНСОЛАР КРВС-125 համակարգերի միջոցով: Մնացած սենյաների օդափոխությունը բնական է: Օդատարները բարձրացվում են տանիքից վեր 0.7մ բարձր և վերջացվում զոնտով: Բոլոր օդատարները ընդունված են ցինկապատ թիթեղից:

3.6. Արտաքին և ներքին էլեկտրամատակարարման համակարգ

Նախագծում նախատեսված է արտաքին էլեկտրամատակարարման և լուսավորության ցանցերի իրականացում, ներքին աշխատանքային և տարահանման լուսավորություն: Ներքին էլեկտրամատակարարումն իրականացվում է հարկերի նախագծվող վահանակներից: Լույսի աղբյուր հանդիսանում են LED լամպերով լուսատուները: Սենյակներում ընդհանուր լուսավորության համար նախատեսված է լուսատուների տեղական կառավարում: Մանկական սենյակներում անջատիչները և խրոցակային վարդակները տեղադրվում են 1.8մ բարձրության վրա, խոհանոցի,

լվացքատան և ջեռուցման սենյակի վարդակները՝ 1.2մ բարձրության վրա, աշխատասենյակներում՝ 0.8մ: Լուսավորության և խրոցակային վարդակների ցանցը անցկացվում է ՈՈՑ մականիշի պղնձե հաղորդալարով, լուսավորության ցանցը 3x1.5մմ² հատվածքի հաղորդալարով, վարդակների մագիստրալ ցանցը մինչև ճյուղավորման տուփ 3x4մմ², իսկ տուփից դեպի վարդակներ 3x2.5մմ², խոհանոցի և լվացքատան մագիստրալ ցանցը՝ 3x6մմ²: Ներքին էլեկտրամատակարարման ցանցը իրականացվում է 3 լարանոց (L,N,PE): Ցանցի մոնտաժը իրականացվում է գաջի սվաղի տակով, խողովակներով, պանելների դատարկություններում: Էլեկտրահաղորդագծերի մոնտաժը իրագործել սանտեխնիկական ցանցի մոնտաժից հետո, մինչև ծածկի կարերի լցափակումը և միջնորմների տեղադրման հետ միաժամանակ: Էլեկտրաուժային ցանցի էլեկտրամատակարարումը իրականացվում է պղնձե ջիղերով ВВГнг մականիշի մալուխով, պոլիէթիլենային խողովակներով: Մանկապարտեզի հիմնական անցուղիներում նախատեսված է վթարային լուսավորություն և ելքի ցուցանակներ: Էլ. էներգիայի ընդհատվելու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով միանում են տեղային անկախ աղբյուրին /3 ժամյա աշխատանքի ակումուլյատորային մարտկոցներ/: Կառույցում նախատեսված են հողանցման հպակով վարդակներ և իսկ խոնավ սենյակներում պաշտպանիչ անջատման սարքեր/УЗО/: Բոլոր շենքերի վարդակները, որտեղ երեխաները հնարավոր է գտնվեն առանց մեծահասակների, անհրաժեշտ է ունենան պաշտպանական սարքվածք, որն ինքնավար կերպով փակում է խրոցակային վարդակի բնիկը՝ հանված խրոցակի դեպքում:

Մանկապարտեզի ներանցումային բաշխիչ վահանը տեղադրվում է առաջին հարկում՝ վահանային սենյակում: Նախագծվող շենքում իրականացվում է պոտենցիալների հավասարեցման համակարգ: Վահանային սենյակում իրականացվում է հողանցման կոնտուր: Ներանցումային բաշխիչ վահանի մեջ տեղադրվում է գլխավոր հողանցման հաղորդաթիթեղ (ԳՀՀ), որն էլ միանում է վահանային կոնտուրին և հողանցվում է արտաքին կոնտուրով: Գլխավոր հողանցման հաղորդաթիթեղին միացվում են շենքի առկա ե/բ կոնստրուկցիաների մետաղական ամրանները, կոմունիկացիաների մետաղական խողովակները, օդատարները:

Մանկապարտեզի արտաքին էլեկտրամատակարարումը իրականացվում է առկա ենթակայանից, ստորգետնյա մալուխային գծով՝ ենթակայանի մեջ տեղադրելով ավտոմատ անջատիչ: Ստորգետնյա սնուցման մալուխը անցկացվում է խրամուղու մեջ, գետնի մակերեսից 0.7մ խորությամբ, շենքերի և կառույցների հիմքերից ոչ պակաս 0.6մ հեռավորությամբ ՄՄՅ - 2008 գլուխ 2.3.84, գլուխ 2.3.85: Մալուխի փռումը գրունտի մեջ իրականացնել համաձայն ՄՄՅ-2008 գլուխ 2.3.83 և 2.3.99: Զուգահեռ տեղադրման ժամանակ հեռավորությունը (հորիզոնական) մալուխային գծերից մինչև

խողովակաշարերը (ջրամատակարարման, կոյուղու, գազի) պետք է լինի ոչ պակաս 1մ, նեղված հատվածներում, խողովակներով 0.25մ, ՄՄԾ-2008 գլուխ 2.3.88, 2.3.89: Մալուխային, ջրամատակարարման, կոյուղու, գազի գծերի և ջերմային ցանցի հատման ժամանակ, մալուխային գիծը հատման տեղում անցկացվում է խողովակի միջով, պահպանելով նեղված հատվածներում 0.25մ հեռավորություն մալուխային և այդ գծերի միջեւ, ՄՄԾ-2008 գլուխ 2.3.95, 2.3.96: Մալուխների փռումը կանաչ գոտում իրականացնել համաձայն ՄՄԾ-2008 գլուխ 2.3.87 (պահպանել մինչեւ 1մ հեռավորություն ծառերի բները եւ 0.7մ թփուտները): Էլեկտրամատակարարման մալուխի ուղեգծի իրականավումը կատարել էլ. ցանցի մասնագետի ներկայությամբ, առկա գործող էլեկտրամատակարարման մալուխի խրամուղում:

Մանկապարտեզի մասնաշենքերում ապամոնտաժված էլեկտրասարքավորումները, ստեղծված հանձնաժողովի որոշմամբ, որակավորել և հանձնել համապատասխան իրավական մարմիններին: Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համապատասխան գործող ՄՄԾ-2008, 7-րդ հրատարակչություն:

3.7. Հակահրդեհային ազդանշանման համակարգ

Հրդեհային ազդանշանման լրակազմի աշխատանքային գծագրերը մշակված են ճարտարապետաշինարարական գծագրերի հիման վրա: Նախագծի տվյալ մասով իրականացվում է հրդեհային ավտոմատ ազդանշանում: Շենքի ներսում, հրդեհի հայտնաբերման համար նախատեսված են հրդեհային ծխային, ջերմային, ձեռքի ազդասարքեր, ինչպես նաև լույսաձայնային ազդասարքեր: Զերմային երկու ազդասարքեր տեղադրվում են նաև կաթսայատան մեջ: Որպես ընդունիչ կայան օգտագործված է 20 մուտքանի հսկիչ պանել, LSD ստեղնաշարով, ավտոմատ սնուցման բլոկով, ակումուլյատորով: Հրդեհի ազդանշանի դեպքում կենտրոնական վահանակի օգնությամբ կարելի է ճշտել, թե որ զոնայում է տագնապ: Ընդունիչ կայանը միացված է պահպանային ազդանշանման սարքին, որը ահազանգի դեպքում ունի հնարավորություն բջջային ցանցով ավտոմատ զանգելու (և հաղորդագրություն ուղարկելու) իր մեջ մուտքագրված հեռախոսահամարներին հաջորդաբար (911, և այլ):

Հսկիչ պանելը տեղադրվում է առաջին հարկում՝ աշխատակազմի սենյակում: Պանելի սնուցումը իրականացվում է ВРГ մակնիշի մալուխով: Հրդեհային համակարգի ազդասարքերը տեղադրվում են պաշտպանվող սենյակի առաստաղի վրա, ինչպես նաև պատերին: Հրդեհային ազդանշանման ցանցը իրականացված է 4x0.75 բազմալար չիրկիզվող մալուխներով՝ պարփակված ՊՎՔ խողովակի մեջ և ամրակով ամրեցված, սնուցումը կատարվում է ղեկավարման վահանակից, միացված անընդմեջ սնուցման աղբյուրին: Մեկ ծխային տվիչի առավելագույն աշխատանքային հսկողության մակերեսը

մինչև 100մ2, որը կարող է փոխվել կախված առաստաղի բարձրությունից և այլ շինարարական խոչընդոտներից: Այն տեղադրվում են առաստաղի մակերեսի վրա: Ձերքի ազդարարման տվիչները տեղադրվում են էվակուացման ելքերում, միջանցքներում, աստիճանավանդակներում գտնվող տարածքներում /հատակից 1,5մ բարձրության վրա/: Բոլոր աշխատանքային և ոչ աշխատանքային տարածքներում նախատեսվում է հակահրդեհային ծխային տվիչներ և ջերմային /կախված սենքի նշանակումից/, որոնք հայտնաբերում են հրդեհի նախնական օջախներ և ձերքի ազդարարման տվիչներ, որոնց միջոցով ղեկավարման վահանակը ստանում է ազդանշան հրդեհի անմիջապես բռնկման տեղեկացման դեպքում, որը կատարվում է որևէ անձի միջոցով: Ցանցի մալուխը անցնում են պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակի միջով, թաքնված սվաղի շերտի տակ: Հրդեհային ազդանշանման ցանցը իրականացված է չիրկիզվող պղնձե ջիղերով մալուխով, պոլիէթիլենային գոֆրե խողովակով, պատերի և առաստաղի վրայով, թաքնված սվաղի շերտի տակ:

Սպասարկող անձնակազմին էլեկտրական հոսանքից պաշտպանելու համար նախատեսվում է հսկիչ պանելի հողակցումը:

3.8. Տեսահսկողության համակարգ

Տեսադիտարկման համակարգի նախագիծը կատարված է պատվիրատուի կողմից ներկայացված ճարտարապետական գծագրերի և նախագծման առաջադրանքի համաձայն:

Ներսի և դրսի տեսահսկողությունը իրականացված է 19 հատ տեսախցիկներով, որոնց ազդանշանը գրանցվում է պատկերի տեսագրման սարքի միջոցով, տեղադրված տնօրենի սենյակում, որտեղ տեղադրվում է նաև մոնիտորը և ունի հնարավորություն հսկելու տեսախցիկները: Տեսադիտարկման համակարգի մոնտաժը իրականացվում է պատերի վրայով, պոլիէթիլենային խողովակներով, նախապես պատրաստված ակոսներում:

Տեսախցիկների դիրքը և բարձրությունները հատակագծի վրա նշված են պայմանականորեն: Շինարարության ընթացքում հնարավոր է տեսախցիկների դիրքի և բարձրության փոփոխություն՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.9. Արևային ֆոտովոլտային համակարգ

Նախագծում նախատեսվում է 27.6 կՎտ պիկային հզորությամբ ՖՎ համակարգի տեղադրում թիվ 118 մանկապարտեզի մասնաշենքի տանիքին: Տեղակայման աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 40°/10'24,69" և 44°/34'23,87" արևային երկարության, 1340մ բարձր ծովի մակարդակից: Տեղանքում

տարեկան հորիզոնական ճառագայթումը մոտ 1534 կՎտ/մ²: Տարվա մեջ անարև օրերի քանակը 41 օր է: Առավելագույն դրական և բացասական ջերմաստիճանները համապատասխանաբար 410/Ց և 300/Ց: Օրվա մեջ առավելագույն տեղումները /ձյուն/ 40մմ: Քամին հարավ-արևմտյան է: ՖՎ պանելները տեղադրվելու են տանիքին՝ հորիզոնի նկատմամբ 320 անկյունով և ուղղված դեպի հարավ:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

4.1. Գոյություն ունեցող իրավիճակը

Երևանի №118 մանկապարտեզը գտնվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Վիլնյուսի փողոցի թիվ 121 հասցեում: Այն կառուցվել է անցած դարի 80-ականներին:

Մանկապարտեզը բաղկացած է երկու երկհարկանի՝ նկուղային մասով մասնաշենքերից, որոնք միմյանց հետ կապված են երկու երկհարկանի՝ 3,2x15,1 մ արտաքին չափեր ունեցող աստիճանավանդակներով: Մասնաշենքերից յուրաքանչյուրն ունի 12,5x42 մ արտաքին չափեր: Հարկերի բարձրությունը կազմում է 3.3մ: Տաքանցումները տեղադրված են 12մ հեռավորության վրա և մասնաշենքերի հետ միասին ստեղծել են 12x13 մ չափերի ուղղանկյունաձև ներքին բակ: Մանկապարտեզը տեղակայված է մեծ թեքություն ունեցող տեղանքի վրա, ինչի հետևանքով մասնաշենքերի համապատասխան հարկերի հատակների նիշերի տարբերությունը կազմում է մոտ 1,8մ: Կառույցի կոնստրուկտիվ տարրերն ունեն հետևյալ բնութագրերը.

- հիմքերը սյուների տակ կետային են, որոնք արտաքին պատերի տակ կապված են միմյանց հետ ժապավենային հիմքերով:
- Սյուները՝ հավաքովի ե/բետոնե, 30x30սմ կտրվածքով:
- Կրող հեծաններն ունեն տավրած կտրվածք՝ 48x40 չափսերով:
- Արտաքին պատերն իրականացված են հավաքովի ե/բետոնե 30սմ հաստությամբ պանելներով: Պատերը կախովի են, որոնք հենվում են և ճկուն կապերով կապվում են շենքի հիմնակմախքի տարրերին:
- Միջհարկային ծածկերը և վերնածածկը իրականացված են հավաքովի ե/բետոնե կլորանցքավոր բազմանցք սալերով:
- Աստիճանավանդակների սանդուղքները իրականացված են ամբողջական աստիճանաքայլերով (աստիճանները և հարթակները համակցված են):
- Միջնորմներն իրականացվել են պեմզաբետոնե բլոկերից:

- Տանիքը հարթ է, ներքին ջրահեռացումով:

Մանկապարտեզի բոլոր հատվածամասերի կոնստրուկտիվ համակարգերը լուծված են կարկասային սխեմայով, որոնց հիմնականաբար իրականացված է ИИС-04 սերիայի հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաններով: Հիմնականաբար ներկայացված է կրող լայնական շրջանակներով, որոնք մյուս ուղղություններով կապվում են միմյանց ծածկերի հարթության մեջ կապող կապալասարերով: Կրող շրջանակները երկթոփշք են՝ 6.0մ թոփշքներով: Կրող շրջանակների քայլը մյուս ուղղությամբ կազմում է 6.0մ:

4.2 Նախապատրաստական աշխատանքների բնութագրերը

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի №118 մանկապարտեզի շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

1. շինհրապարակը ժամանակավոր շինություններից ազատելուց հետո
2. վտանգավոր շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ աշխատանքի վտանգավոր գոտիներում ապահովել շինարարների և շրջապատի անվտանգությունը
3. գոյություն ունեցող բարձր և ցածր լարման հոսանքի հաղորդալարերը տեղափոխել համապատասխան շահագործող կազմակերպության կողմից
4. քանդման աշխատանքները սկսել կառույցը հոսանքազերծելուց և ինժեներական ցանցերի անջատումից հետո՝ համապատասխան շահագործող կազմակերպության կողմից
5. շինարարական աշխատանքները կատարելիս խիստ պահպանել աշխատանքների իրականացման անվտանգության կանոնները
6. շինարարական աշխատանքները սկսել շին. կազմակերպության կողմից աշխատանքների իրականացման նախագծի մշակումից և շինարարներին անվտանգության կանոնների ծանուցումից հետո:

4.3 Հիմնանորոգման տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

4.3.1 Սեյսմազինվածության ավելացում

Նախագծով տրված են հետևյալ կոնստրուկտիվ լուծումները շենքի հատվածամասերի սեյսմազինվածության բարձրացման համար:

Հիմնականաբար լայնական և երկայնական շրջանակների մեջ նախատեսվում են կապերի տեղադրում (դիաֆրագմաներ և մետաղե պորտալային կապեր), որոնք ամրացվում են հիմնականաբար երկաթբետոնե տարրերին: Կապերի տեղադրումը նախատեսված է բոլոր մասնաշենքերում, բացառությամբ 6.0մ լայնությամբ երկու կապող

անցումային հատվածամասերից: Կապերը նախատեսված են 20սմ հաստությամբ միաձույլ երկաթբետոնե դիաֆրագմաներով և պողպատե պորտալային կապերով: Դիաֆրագմաները և մետաղական կապերը ամրակցվում են հիմնակմախքի սյուներին և հեծաններին: Սյուները, որոնց ամրակցվում են կապերը, ուժեղացվում են պողպատե գոտեկապերով: Հիմքերում, դիաֆրագմաների տակ նախատեսված են միաձույլ երկաթբետոնե հիմնային գոտիներ: Միջհարկային ծածկերի և վերնածածկի սալերը նախատեսված են ուժեղացնել միաձույլ երկաթբետոնե, 5սմ հաստությամբ սալերով, որոնք կապվում են գոյություն ունեցող բազմանցք սալերին ամրանային հարթ կարկասներով և խարսխաձողերով: Բոլոր մասնաշենքերում նախատեսված են նոր մետաղական էվակուացիոն աստիճանների տեղադրում: Շենքի հիմնակմախքի կրողունակության ու կայունության հաշվարկը կատարվել է Lira sapr 2016 ծրագրային փաթեթով: Որպես հաշվարկային սխեմա ընտրվել է շենքի տարածական սխեման ամբողջությամբ: Հաշվարկման հիմքում ընդունվել է շենքի հատվածամասերի սեյսմազինվածության մակարդակի բարձրացում, ընդունելով սեյսմազինվածության ավելացման գնահատականի չափանիշը հանդիսացող “ku” գործակիցը /ըստ հիշն1 – 4.02-99 նորմի 6.3 կետի/, $ku = 0.50 / 0.55$ -ի սահմաններում:

Շենքում կատարվում են հետոյալ հիմնական նախապատրաստական աշխատանքները:

Շենքից հեռացվում են բոլոր միջնորմները և ծածկերի սալերից հեռացվում են նրանց վրայի բոլոր շերտերը, մինչև սալերի բետոնի մաքուր մակերեսը: Սալերի արանքները պետք է մաքրել աղբից և հին շաղախի մնացորդներից: Ուժեղացման աշխատանքների կատարման բացատրագրերը դիտարկել նախագծի համապատասխան գծագրական թերթերում: Նախագծում որպես գրունտային պայմաններ ընդունված են չաղակալված, չուռչող և ոչ նստվածքային գրունտներ: Տեղամասը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում: Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշների ընդունված է 2-րդ կարգ: Հիմնատակերը բացելուց հետո, մինչև հիմքերի պատրաստելը, ինժեներաերկրաբանի մանսակցությամբ պետք է իրականացնել հիմնատակի գրունտների հետազոտություն և փաստագրել համապատասխան ակտով: Նախագիծը կատարված է ՀՀ գործող նորմատիվ տեխնիկական պահանջներով:

4.4 Շինարարական աշխատանքների կազմակերպում

Իրականացվող շին. աշխատանքների ամբողջ համալիրը բաժանվում է 4 փուլերի.

- Նախապատրաստական աշխատանքներ,
- Քանդման աշխատանքներ, որոնք իրականացվելու են միայն ներշենքային պայմաններում (օր.՝ միջնապատերի քանդում),

- Շին - մոնտաժային աշխատանքներ,
- Հարդարման աշխատանքներ:

Շինհրապարակի կազմակերպում, որպես այդպիսին չի նախատեսվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեծածավալ շինարարական աշխատանքներ չեն լինելու և նախատեսված է միայն վերակառուցում, ամրացում և վերանորոգում: Որպես շինհրապարակ կծառայեն մանկապարտեզի գոյություն ունեցող շենքի ներշենքային տարածքները:

Ապրանքային բետոնը նախատեսվում է բերել պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրացման համար անհրաժեշտ կոնստրուկցիաները պատրաստվելու են պատվերով՝ հատուկ պոլիգոններում:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար ավտոամբարձիչի աշխատանքը սահմանափակված է գոյություն ունեցող շինությունների առկայությամբ: Ամբարձիչի աշխատանքը պետք է կազմակերպվի անյաես, որ սլաքի աշխատանքի զոնան չանցնի գծագրում նշված սահմանազատված ուրվագծի սահմաններից դուրս:

Ավտոամբարձիչի և ավտոմեքենաների մուտքը դեպի մակապարտեզի տարածք իրականացվելու է գոյություն ունեցող ասֆալտապատ փողոցով: Ավտոամբարձիչի աշխատանքը նախատեսվում է մեկ կողմից: Ամբարձիչի սլաքի և կառուցվող շենքի մոտեցման մինիմալ չափը ընդունված է 1.6մ:

Տեղում սորուն շինանյութերի, վառելիքի և քսայուղերի պահեստներ չեն նախատեսվում, շինանյութերը բերվելու են ըստ անհրաժեշտության:

Շինարարական որոշ միջոցներ կայանվելու են մանկապարտեզի տարածքում առկա ասֆալտապատ և սալապատ հարթակներում:

4.5 Աշխատանքների անվտանգության իրականացման սարքեր և կանոններ

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնց նախազգուշացման համար պետք է ընդունվեն ստորև բերվող անհրաժեշտ միջոցառումներ:

Աղյուսակ 4.1. Աշխատանքային պայմանների անվտանգության նախազգուշական միջոցառումները:

Խախտման հնարավոր հետևանքները	Խախտման պատճառը	Խախտման նախազգուշական միջոցառումները
Դարսակի քանդում, ամբարձիչի ընկնում	Պահեստավորման տեղամասի չպատրաստված հիմք	Հիմքի պատրաստում 3 ⁰ -ից ոչ ավել թեքությամբ, հիմքի խտացում կամ ինվենտար սալերի տեղադրում, միջադիչների

		տեղադրում հենարանների տակ
Ամբարձիչի ընկնում, ճոպանների կտրում, արգելակների խափանում	Ամբարձիչի բեռնունակության գերազանցում	Բեռնունակության սահմանիչի տեղադրում, բեռի քաշի ստուգում
Ոչ ճիշտ առասանում (строповка) և կոնստրուկցիայի տեղադրում, վնասվածքներ բռնիչ սարքերից, կառճատեսության նշաններ	Աշխատանքային զոնայի թույլ լուսավորում	Լրացուցիչ լուսավորման սարքերի տեղադրում, աշխատանքային զոնայի լուսավորության համար
Կոնստրուկցիաների խփում տրանսպորտին կամ դարսակին, ճոպանի լարում	Նախագգուշական ազդանշանների ոչ ճիշտ մատուցում	Առասանիչ բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
Ամբարձիչի ժամանակից շուտ մաշում	Ամբարձիչի աշխատանքի ռեժիմի անհամապատասխանություն նրա օգտագործման պայմաններին (ամբարձիչի օգտագործում ավելի ծանր պայմաններում, քան տրված է անձնագրում): Չնախատեսված աշխատանքային շարժումների համատեղում	Ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար ստուգում: Ամբարձիչի կոնստրուկցիային մանրակրկիտ ուսումնասիրություն
Էլեկտրականության խափանումներ	Աշխատանք էլեկտրական գծերի մոտ առանց թույլատվության (наряд-допуск), ԷՀԳ և ամբարձիչի, պահեստի հեռավորության գերազանցում	ԷՀԳ և ամբարձիչի, պահեստի թույլատրելի հեռավորության պահպանում
Տեղափոխվող կոնստրուկցիայից, առասանման սարքից վնասվածքներ	Ձայնային ազդանշանի բացակայում, նախագգուշական ազդանշանի ոչ ճիշտ մատուցում	Ազդանշանի պարբերաբար ստուգում, նրա աշխատանքի անսարքության վերացում: Առասանող բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
	Որակագրկված և մաշված բեռաբռնիչ սարքերի օգտագործում	Բեռաբռնիչ սարքերի պարբերաբար տեխնիկական վերահաստատում
Ամբարձիչով վրաներ բանվորների վրա, ամբարձիչի պտտվող մասերով բանվորների վնասում:	Աշխատանքների կազմակերպման նախագծով (ԱԿՆ) հաստատված տեղաշարժման ուղեգծից շեղում, նյութերի և կոնստրուկցիաների	Աշխատանքների իրականացում համաձայն ԱԿՆ, ազդանշանային սարքի ստուգում և անսարքության վերացում: Թույլատրելի հեռավորության, ոչ պակաս քան 1մ պահպանում

	տեղադրում տրանսպորտի և բեռնաբարձիչ մեխանիզմների ուղեգծի վրա: Ամբարձիչի և կառույցի միջև թույլատրելի հեռավորության գերազանցում	
Բանվորի ժամանակից շուտ հոքնածություն, գլխապտույտ և փսխում:	Աշխատանքների իրականացում այն զոնաներում, որտեղ նորմաներից գերազանցում են աղմուկը, վիբրացիան, գազերի առկայությունը, աշխատանքային զոնայի տեսադաշտի բացակայում	Աղմուկի, վիբրացիայի, գազավորման թույլատրելի նորմերի պահպանում, աշխատանքային զոնայի տեսադաշտի ապահովում
Մրսածության հիվանդություններ և ցրտահարումներ:	Նորմաներով սահմանված ջերմաստիճանից ցածր պայմաններում աշխատանք	Աշխատանքի դադարեցում, տաքացվող տնակի տեղադրում

Եթե շինարարության հրապարակում առկա են էլեկտրահաղորդիչ գծեր, ապա ամբարձիչը պետք է տեղակայվի 30մ-ից ոչ մոտիկ ծայրամասային էլ. հաղորդիչ լարից: Եթե անհրաժեշտություն կա աշխատել 30մ-ից պակաս հեռավորության վրա, պետք է ձևակերպել կարգագիր-թույլատվություն, որտեղ նշվում են այդ աշխատանքի անվնաս պայմանները:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կհայտնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5°:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆԿԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկան շինարարության մեջ»:

Շինարարության տևողությունը

Կառույցի ծավալը կազմում է՝ 15702.0 մ³:

Շինարարության տրոհությունը՝ 20 ամիս:

Նորմատիվային կառույցի ընդհանուր ծավալը կազմում է 10000.0մ³ կառուցման շինարարական աշխատանքների տևողությունը՝ կազմում է 9.0 ամիս:

Կառույցի սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման շինարարական աշխատանքների տևողությունը կլինի՝

մակերեսի մեծացումը կազմում է՝

$$(15702.0 - 10000.0) / 10000.0 \times 100 \% = 57 \%$$

Նորմատիվային փոքրացումը կազմում է $57 \% \times 0.3 = 17\%$

Շինարարության տևողությունը՝ օգտագործելով էքստրապոլյացիայի մեթոդը, կլինի՝

$$S = 9 \times (100 \% + 17 \%) / 100 \% = 10.5 \text{ ամիս}$$

Քանդման աշխատանքների տևողությունը կազմում 2.5 ամիս: Օգտագործելով համապատասխան ուղղման գործակիցները՝ կառույցի սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման աշխատանքների տևողությունը կազմում է՝

$$S = (10.5 + 2.5) \times 1.1 \times 1.15 \times 1.2 = 20.0 \text{ ամիս}$$

Նախապատրաստական աշխատանքների փուլ - 0.5 ամիս:

Քանդման աշխատանքների փուլ - 2.5 ամիս:

Շին. մոնտաժային աշխատանքների փուլ - 17.0 ամիս:

Արտաքին աշխատանքների և բարեկարգման աշխատանքների տևողությունը համատեղել կառույցի հիմնանորոգման աշխատանքների տևողության հետ:

Կապիտալ ներդրումները բաշխվում են 7 եռամսյակների՝

1-ին եռամսյակ՝ 10 % 2-րդ եռամսյակ՝ 15% 3-րդ եռամսյակ՝ 20%

4-րդ եռամսյակ՝ 25 % 5-րդ եռամսյակ՝ 15% 6-րդ եռամսյակ՝ 10%

6-րդ եռամսյակ՝ 5 %

Շին. աշխատողների միջին թիվը՝ - 25 մարդ, որից՝

ԻՏԱ - 2 մարդ

ծառայող - 1 մարդ

պահակ - 1 մարդ:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Նախատեսվող շինարարական և տրանսպորտային միջոցները ներկայացված են ստորև.

Աղյուսակ 4.2. Մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակները

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների քանակը, հատ
1	Ավտոկռունկ	1
2	Ճնշակ	1
3	Բեռնատար ավտոմեքենա 10տ	2
4	Ավտոինքնաթափ 3.5տ	2
5	Ավտոբետոնախառնիչ	1
6	Ավտոբետոնաշաղախատար	1
7	Ավտոբետոնապոմպ	1
8	Եռակցող ագրեգատ	4
9	Հարվածող մուրճ	2
10	Էլեկտրահարվածող մուրճ	2
11	Գայլիկոնայն մեքենա	2
12	Թրթռիչ ամրացվող	4
13	Թրթռիչ մակերեսային	4
14	Թրթռիչ խորքային	12
15	Ներկացրիչ	4
16	Օդատաքացուցիչ	2

4.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Ուսումնարանի կառուցման շինարարական աշխատանքների ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավագ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների, ինչպես նաև փոշենստեցման համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է, 4 հոգի

N - ջրածախսի նորման՝ 0.016մ^3 ,

n_1 - բանվորների թիվն է - 21,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ $0.025 \text{մ}^3/\text{մարդ օր}$,

T - աշխատանքային օրերի առավելագույն թիվը՝ 600 օր:

$$W = (4 \times 0.016 + 21 \times 0.025) \times 600 = 353.4 \text{մ}^3/\text{շին.ժամ}, \text{ միջին օրական } 0.589 \text{մ}^3:$$

Արտադրական նպատակներով ջրի ծախսը պայմանավորված փոշեառաջացման օջախների ջրմամբ: Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T \times K_1,$$

որտեղ՝ S - թրջվող մակերեսն է, 600մ^2 ,

K - ջրցանման նորման - $0.0015 \text{մ}^3/1 \text{մ}^2$

T - աշխատանքային օրերը, 154 օր

K_1 - ջրցանի օրական քանակը, 2

$$\text{Այսպիսով՝ } V_1 = 600 \times 0.0015 \times 154 \times 2 = 277.2 \text{մ}^3/\text{շին.ժամ}:$$

Միջին օրականը կազմում է 1.8մ^3 :

Ջրահեռացում

Ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին և արտահոսք չի առաջանում:

Կենցաղային կեղտաջրերի ծավալը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$V_1 \times (1 - L)$, որտեղ L - կորստի գործակիցն է, ընդունվում է 5% (0.05)

$$709.8 \times (1 - 0.05) = 674.3 \text{մ}^3, \text{ միջին օրական՝ } 1.3 \text{մ}^3:$$

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից, որոնք կտեղադրվեն մինչև շինարարական աշխատանքների սկիզբը և կմիացվեն տարածքում առկա ջրագծին և կոյուղուն:

5 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

5.1 Տարածքի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում: Տարածքում առկա են բնակելի և հասարակական նշանակության շինություններ:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հիմնականում չորրորդական ժամանակի ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները, որոնք բավական հզոր կուտակումներ ունեն այս տարածքում:

Էկզոգեն երկրաբանական երևույթներից այստեղ առկա են՝ մակերեսային էրոզիա և ջրոլողում մթնոլորտային տեղումներից, ինչպես նաև տեխնածին պրոցեսներ կապված կառուցապատումների և մարդու գործունեության հետ:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտևորման քարտեզի համաձայն Երևան քաղաքը գտնվում է II գոտում, ունի 0.4g արագացում և 9 բալ սեյսմիկություն:

Տարածքը բարենպաստ է շինարարական աշխատանքների համար, որոշ դժվարություն կարող են առաջացնել՝ կառուցապատվածությունը և բանուկ տրանսպորտային շարժը:

Նոր Նորք վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք Մարաշ, Քանաքեռ Ձեյթուն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին:

Տարածքը՝ 1 411 հա

Բնակչությունը (2021թ.)՝ 134 000 մարդ¹:

¹ <https://armstat.am>

Նկար 1. Տեղանքի իրադրային սխեմա



5.2 Կլիմայական պայմանները

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսին միջին ամսական ջերմաստիճանը $24-25^{\circ}\text{C}$, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը $-2,9^{\circ}\text{C}$ է, հարաբերական խոնավությունը 77% (ժ.15-ին), թույլ քամիները 2-3մ/վրկ արագությամբ:

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է $11.5-12^{\circ}\text{C}$: Բացառձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս 30°C , բացառձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ $+42^{\circ}\text{C}$:

Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Հունվար ամսին հանդարտ օրերի թիվը կարող է կազմել 45% – 75%: Միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% , հունվարի միջին ամսական ջերմաստիճանը $-2,9^{\circ}\text{C}$ է, հարաբերական խոնավությունը 77%, դիտվում են թույլ քամիներ 2-3մ/վրկ արագությամբ: Քամու առավելագույն արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ: Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգու/մ² է: Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 60 սմ է:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ:

Աղյուսակ 5.1 Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 5.2 Օդի խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենա-ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Երևան	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 5.3 Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	<u>Տեղումների քանակը միջին ամսական մմ</u>												Ձյան ծածկույթը			
	<u>օրական առավելագույնը</u>												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երևան	<u>28</u>	<u>31</u>	<u>38</u>	<u>48</u>	<u>55</u>	<u>29</u>	<u>16</u>	<u>8</u>	<u>11</u>	<u>31</u>	<u>30</u>	<u>28</u>	<u>353</u>	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ: Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգու/մ² է:

5.3 Մթնոլորտային օդ

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի

միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայաններից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով, և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետերից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Ըստ Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ 2021 թվականի տեղեկագրի Երեւան քաղաքում գործում է 45 դիտակետ եւ 5 դիտակայան: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի եւ գետնամերձ օզոնի պարունակությունները: Փոշու

որոշ փորձանմուշներում որոշվել են մետաղների պարունակությունը, որոնց ամսական և տարեկան միջին կոնցենտրացիաները բերված են գրաֆիկների տեսքով: 2021թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտի աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը (ՄԱՑ) 2.14 է (փոշի՝ 1.15, ծծմբի երկօքսիդ՝ 0.34, ազոտի երկօքսիդ՝ 0.61, գետնամերձ օզոն՝ 0.05):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ծծմբի երկօքսիդի եւ գետնամերձ օզոնի

կոնցենտրացիաների նվազման, իսկ փոշու եւ ազոտի երկօքսիդի՝ աճման տենդենց:

2021 թվականին Երեւան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշներից փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1 անգամ: Մնացած ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել

համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 29%-ում դիտվել են փոշու, 13%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 0.4%-ում՝ ազոտի երկօքսիդի, 1%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել

ինչպես բնակլիմայական պայմաններով եւ աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը²:

² <http://armmonitoring.am>

Աղյուսակ 5.4 Երևան քաղաքի մթնոլորտային աղտոտվածության ցուցանիշները

Որոշվող միացություն	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³	Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	0.059	0.017	0.05
Ազոտի երկօքսիդ	0.910	0.027	0.04
Փոշի	2.076	0.172	0.15
Գետնամերձ օզոն	0.095	0.005	0.03

5.4 Զրային ռեսուրսներ

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում նույնպես իրականացնում է «Հիդրոոգերակութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում:

Ըստ ՊՈԱԿ կողմից ներկայացված 2020 թվականի տեղեկագրի Հրազդան գետի վերին հատվածի ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս): Գետաբերանի հատվածներում /Երևանից ներքև/ ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս): Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է՝ (5-րդ դաս): Վատ որակը պայմանավորված է լուծված թթվածնի, ԹԿՊ₅, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, վանադիումի, ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ:

Տարածքի հեռավորությունը Հրազդան գետի մոտակա հատվածից ուղիղ գծով կազմում է 6 կմ:

5.5 Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավագոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Ներկայացվող տարածքում տարածված են կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային հողերը, որտեղ բուսածածկը և հողածածկը համատարած բնույթ չեն կրում: Բուսաշերտը դիտարկվող տարածքում առկա է մի քանի շինություններից ազատ տեղամասերում: Բուսաշերտի հզորությունը տատանվում է 10 – 20 սմ:

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի քաղաքի տարածքը աղտոտված է ծանր մետաղներով և մասամբ՝ ռադիոնուկլիդներով: Ըստ ծանր մետաղներով աղտոտվածության քաղաքի տարածքը ներկայումս վերագրվում է միջին աղտոտվածության տարածքներին: Սակայն քաղաքի տարածքում առանձնանում են նաև ուժեղ աղտոտված տարածքներ: Պետք է նշել, որ դիտարկվող տարածքը աղտոտված չէ:

Անմիջապես մանկապարտեզի տարածքի մեծ մասը կառուցապատված է, սալապատ և ասֆալտապատ: Բուսահող մուգ մոխրագույն, դեղնավուն երանգով, մանրախճի պարունակությամբ, ավազակավային կազմի, առկա է մանկապարտեզի մի քանի հատվածներում առկա սիզամարգերում:

5.6 Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի խառը կառուցապատման գոտում, որտեղ բացակայում են բնական լանդշաֆտները:

Ստորև բերված է Երևանի տարածաշրջանի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն:

5.6.1 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանյան գոգավորությունը տեղաբաշխված ծովի մակերևույթից 860-1390մ բարձրությունների սահմաններում: Երևանյան գոգավորությունում առկա են հարթավայրային լանդշաֆտային և լավային սարավանդներ, որոնք բաղկացած են կիսաանապատային և նախալեռնային գոտիներից: Երևանի դիտարկվող տարածքում, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը գերիշխում են լավային սարավանդները, իսկ հարավային լանդշաֆտները՝ Հրազդան և Գետառ գետերի սելավաբերուկ հողատարածքներն են: Երևան քաղաքը գտնվելով ջրազուրկ կիսաանապատային գոտում՝ ընդերքում ունի հարուստ ջրատար շերտեր՝ խորքային ջրեր:

Երևան քաղաքի տարածքը Անդրկովկասի ամենաչորային շրջաններից մեկն է, կլիման այստեղ խիստ ցամաքային է, կիսաանապատային: Երևանում ցածր է նաև օդի

հարաբերական խոնավությունը, որն ամռան ամիսներին իջնում է մինչև 40%-ի: Երևանում հաճախակի նկատվում է կարճ գարուն, որը բացասական ազդեցություն է ունենում ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա:

Երևանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, աղքատ սննդանյութերով, հարուստ կարբոնատներով, սակավազոր, կավավազային, կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ, շերտաթեփուկավոր կամ փոշեհատիկային կազմությամբ, քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով: Հազարամյակների ընթացքում արհեստական ոռոգման տարբեր տեսակի ագրոմիջոցառումների շնորհիվ Երևանի տարածաշրջանում առաջացել են կուլտուր-ոռոգելի զգալի հողատարածքներ, որոնք վերածվել են տարբեր տիպի փարթամ կուլտուրական լանդշաֆտների:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է, վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Անմիջապես մանկապարտեզի տարածքի մի քանի մասերում կան կանաչ գոտիներ, որոնց վրա առկա են 25 – 30 ծառ և թփեր, հիմնականում՝ ծիրանիներ, թղկիներ, թթենի և այլն, ինչպես նաև 12 – 15 թփեր:

5.6.2. Կենդանական աշխարհ

Երևանի տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետներ, տնային մկներ: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարաոտ սցինկը, օձերից՝

կույր օծուկը, ղնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրազդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում վայրի կենդանատեսակներ չեն կարող լինել:

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում նաև բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության և մշակութային հուշարձանների, կամ կենսաբազմազանության վտանգված տեսակների հետ:

5.7 Սոցիալ տնտեսական պայմանները

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից³:

Աղյուսակ 2.5. Երևանի ընդհանուր ցուցանիշները

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 330.0 հա
3	այդ թվում վարելահողեր	913.2 հա
4	Վարչական շրջաններ	12
5	Բնակչության թվաքանակը 2021թ. տարեսկզբի դրությամբ	1 091.7 հազ. մարդ
6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2020թ.	36.8 %

³ www.armstat.am

Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2020թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 2.6. Երևանի տնտեսության համամասնական տվյալները

Արդյունաբերություն	34.4
Շինարարություն	57.5
Մանրածախ	70.3
Ծառայություններ	87%:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1 Ռիսկերի գնահատում

Երևանի թիվ 118 մանկապարտեզի նախատեսվող հիմնանորոգման իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն հաշվի առնելով աշխատանքների բնույթը և ծավալները, ազդեցությունը չի կարող լինել էական և կկրի ժամանակավոր բնույթ: Ազդեցությունը հիմնականում պայմանավորված կլինի շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Գոյություն ունեցող շինարարական կոնստրուկցիաների ամրացման ընթացքում
- Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ
- Շինաղբի տեղափոխման հետ կապված
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

6.2 Օդի աղտոտում

Թիվ 118 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների և ներշնչային կոնստրուկցիաների քանդման ընթացքում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված քանդման աշխատանքների ժամանակ առաջացող անօրգանական փոշու և տեխնիկական միջոցների շահագործման ժամանակ վառելիքի այրման արգասիքների՝ մրի, ծծմբի և ազոտի երկօքսիդների ու ածխածնի օքսիդի արտանետումներով:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը:

6.3 Աղմուկի ազդեցություն

Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման, ինչպես նաև շինանյութերի և կոնստրուկցիաների բեռնաթափման ժամանակ կբարձրանա աղմուկի մակարդակը:

6.4 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը շինհրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

6.5 Կենսաբազմազանություն

Ջրամատակարարման և կոյուղու խողովակների վերանորոգման/փոխարինման աշխատանքների ժամանակ կարիք կլինի հանել արտաքին հողի շերտը, որի արդյունքում կվնասվի այդ հատվածի խոտածածկը և կհատվեն 3–4 թուփ:

6.6 Բնապահպանական միջոցառումներ

Բացասական ազդեցությունները շրջակա տարածքների և գործունեության ազդեցությունը ենթակա մոտակա բնակչության վրա հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ և կրում են ժամանակավոր բնույթ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական

ազդեցությանների կանխման կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

6.6.1. Մթնոլորտային օդ

- Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- շինարարական աշխատանքների /փոշեռազացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
 - սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
 - պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
 - գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով:
 - խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

Շինարարական գործողությունները կառաջացնեն անօրգանական փոշու արտանետումներ: Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում՝ շինհրապարակի ներսում, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում՝ շարժակոն աղբյուրներից: Այս արտանետումները կրում են ժամանակավոր բնույթ: Քանի որ շինարարական թափոնների և հումք տեղափոխող մեքենաների համար կսահմանվի երթեր՝ ըստ ժամանակացույցի, շինհրապարակից դուրս, բնակելի տարածքներին մոտ արտանետումների գերազանցում չի լինի:

Մթնոլորտի գետնամերձ շերտում արագ ցրման հետևանքով արտանետումները չեն գերազանցի թույլատրելի նորմերը, հայտնում նախատեսված միջոցառումների իրականացմամբ, քանի որ շինհրապարակը բաց տարածք է, քամու միջին արագության պայմաններում արտանետումները ենթակա են արագ ցրման, իսկ անբարենպաստ եղամակային պայմանների դեպքում կիրականացվի ջրցան կամ կկարգաբերվեն տեխնիկական միջոցները:

Արտանետումների քանակները կարող են նվազել պայմանավորված երթերի քանակով, ինչպես նաև մեքենաների արագությամբ /այդ ինտերվալը տատանվում է՝ մեքենայի 30կմ/ժ - 50կմ/ժ արագության սահմաններում՝ պայմանավորված մեքենաների շարժիչների տեխնիկական բնութագրից/:

Թույլատրելի նորմերի սահմաններում ներկայացված վնասակար նյութերի արտանետումների կառավարումը և դրանց հնարավոր վնասակար

ազդեցությունները կբացառվեն և/կամ կնվազեցվեն շինարարական հրապարակում պարբերաբար իրականացնելով շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների ծրագիր, մասնավորապես՝ փոշենստեցման նպատակով նախատեսվում է ջրցանի գործողություններ: Բացի այդ փոշի առաջացնող նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, ինչպես նաև վերջիններիս տեղափոխումը նույնպես կիրականցվի բեռնատարների ծածկված թափքերի պայմաններում: Աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

Մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված բնապահպանական միջոցառումների համալիր ցանկը բերվում է ԲԿՊ-ի՝ Մթնոլորտային օդի աղտոտում և կառավարում ենթաբաժնում:

6.6.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

6.6.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- շինարարական նյութերի ժամանակավոր պահեստները տեղադրել շենքերի ներսում՝ աշխատանքների տեղամասերում,
- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած շինարարական աղբը տեղափոխելով միայն Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի տարածքում գործող շինարարական թափոնների աղբավայր (հիմք՝ Երևանի քաղաքապետի 30.06.2016թ. հ2391-Ա որոշում):

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ Երևանի քաղաքապետարանի կամ համապատասխան կազմակերպության հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- շինանյութերի ձեռքբերում միայն լիցենզավորված մատակարարներից:

6.6.4 Աղմուկ

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը ուսումնարանի հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (քոլեջի շենք, բնակելի և հասարակական շենքեր, հյուրանոցային համալիր) հեռավորությունը շինտարածքից (մոտ 30-50մ): Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ շինարարության ընթացքում աղմուկի մակարդակը նվազեցնելու համար որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում,
- հնարավորության դեպքում սահմանափակել միաժամանակ աշխատող ծանր տեխնիկայի /բուլդոզեր, էքսկավատոր/ շահագործումից:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *ԲԿՊ-ում* (Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

6.6.5 Կենսաբազմազանություն

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Նոր Նորք վարչական շրջանի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

Միևնույն ժամանակ աշխատանքների ավարտից հետո տարածքում նախատեսվում են բարեկարգման և վնասված տարածքների կանաչապատման աշխատանքներ:

6.6.6. Սոցիալական մեղմող միջոցառումներ

Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը պատճառված անհանգստությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝

- շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- շինհրապարակում խուսափում շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,
- շինարարական աշխատանքների վերաբերյալ մոտակա բնակչությանը իրազեկում, որոնց արդյունքում կարող են ավելանալ փոշու քանակները, աղմուկի մակարդակը և ժամանակավորապես փակվեն ճանապարհները,
- ցուցանակների տեղադրում, ինչպես նաև ժամանակավոր անցումների նախատեսում՝ որպես այլընտրանքային ճանապարհներ:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,
- շինհրապարակը ցանկապատել և վերահսկել կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ,
- շինարարների համար անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպում և իրականացում:

Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական ազդեցությունները մեղմացնելու նպատակով աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի՝ 9:00-ից 18:00: Կվերահսկվեն շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն աղմկակլանիչներով, ժամանակին կվերացվեն սարքավորումների անսարքությունները կամ անսարք վիճակում գտնվողները կփոխարինվեն նորերով:

Հնարավոր սոցիալական ազդեցությունները կբացառվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են ԲԿՊ-ի Աշխատանքի և առողջության ապահովման պլանում, մասնավորապես՝ կիրականցվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների

տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի և հանգստի կազմակերպան պայմանները:

6.6.7 Թափոնների կառավարում

Մանկապարտեզի հիմնանորոգման ընթացքում կառաջանա շինարարական աղբ՝ ներշենքային կոնստրուկցիաների քանդման արդյունքում, որի ծավալը ըստ նախագծային փաստաթղթերի կանխատեսվում է 1121.5 մ³:

Այս թափոնատեսակը համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ շենքերի քանդումից առաջացող թափոնները ներկայացված են՝ շինարարական աղբով, ծածկագիր՝ 9120060001004 /վտանգավորության 4-րդ դաս/:

Այս թափոնների կտեղափոխվեն համապատասխան աղբավայր՝ նախապես ստանալով Երևանի քաղաքապետարանի թույլտվությունը:

6.6.8 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ:

Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:

- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:

- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

Մասնավորապես՝ հակահրդեհային միջոցառումների նպատակով անհրաժեշտ է՝

- տրանսպորտային միջոցները հագեցվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:

- Տարածքում գտնվող էլեկտրական ենթակայանը, ավտոտրանսպորտային միջոցների և տեխնիկայի կայանման վայրերը պետք է համալրված լինի հակահրդեհային սարքավորումներով, միջոցներով:

- Նախատեսել հրշեջ հիդրանտի տեղադրում, հրդեհաշիջման համար ապահովել ջրաղբյուրների ճանապարհների և անցումների ազատ ելքերը,

- Տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ և այլն

- Մշտապես իրականացնել տարածքի ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից,

- Նշանակել պատասխանատու, որի պարտավորությունների մեջ կմտնի հակահրդեհային միջոցառումների կիրառումը:

- Մշակել «Արտակարգ իրավիճակների ռիսկը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու գործողությունների ծրագիր», որն իր մեջ կներառի անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ իրականացվող միջոցառումները և հրդեհային անվտանգությունը:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

6.6.9 Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

Միջոցառումներից կարևորվում են հետևյալները.

- շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):
- Տարածքում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
- Աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի, կենցաղային կեղտաջրերի հեռացման և հանգստի կազմակերպման պայմանները և այլն:

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է նախատեսել՝

- ա) մշտապես իրականացնել տարածքի մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
- գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

6.6.10 Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո որպես կարևոր միջոցառումներ նախատեսվում է՝

- բոլոր մակերեսներն այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել մինչև սկզբնական վիճակը,
- ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել տարածքից,
- Վերականգնել վնասված կանաչ տարածքները:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

7. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիթորինգի ստուգաթերթիկում:

Տեխնիկական վերահսկողը պետք է իրականացնի ամենօրյա հսկողություն, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողը պարտավոր է ժամանակին տեղեկացնելու կապալառուին նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե բողոքների գրանցամատյանում լինեն ազդակիրների կողմից համապատասխան բնույթի գանգատներ:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲՆԱԴԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի գործողությունները	Հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխանատուն	Մոնիթորինգի պատասխանատուն
Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	Բացասական ազդեցություններ՝ մանկապարտեզի շինարարության և շահագործման փուլերում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,	Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում: - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռքբերում: - Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռքբերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում:	Կապալառու	Տեխնիկական վերահսկողը
Շինանձնակազմի, աշխատակիցների անվտանգություն	ԲԿՊ-ի և մանկապարտեզի վերակառուցման ծրագրի բնապահպանական պահանջների ոչ լիարժեք նախատեսումը և դրանց մասին տեղեկատվության պակասը կարող է	- Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ - աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ: - Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը շրջակա տարածքների վրա: - Աշխատողների անհատական պաշտպանության	Կապալառու	Տեխնիկական վերահսկողը

	հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:	միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ): - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:		
Շինարարական աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ այլ ինարարական աշխատանքներ	Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ	- Օդի աղտոտման և փոշու կառավարում - Անհրաժեշտ է իրականացնել տարածքի պարբերական ջրցանում՝ փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով: - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինություններում պահվող նյութերի և թափոնների քանակը; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով: - Գոյություն ունեցող շինությունների վերակառուցման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար: - Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք անմիջապես կտեղափոխվեն և չեն առաջացնի կուտակումներ: - Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով: - Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին	Կապալառու	Տեխնիկական վերահսկողը

		նվազագույնի հասցնելու նպատակով: - Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:		
Թափոնների կառավարում	Շինադրի տեղադրում անհամապատասխան վայրերում: Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք է տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր: - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն: - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել: - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու, անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:	Կապալառու	Տեխնիկական վերահսկողը
Կեղտաջրերի	Ջրի որակ	- Շինարարական անձնակազմը կօգտվի	Կապալառու	Տեխնիկական

հեռացում		մանկարարտեզում գոյություն սանհանգույցներից՝ կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով: - Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն Երևան քաղաքի մասնագիտացված կետերում, բացառելով արտահոսքը շրջակա տարածքներ:		վերահսկողը
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	- Շինարարության ազգային նորմերի համաձայն անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում: - Պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ: - Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից, մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: - Երթևեկության ակտիվ կառավարում փորձված և հատուկ հանդերձավորված անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար:	Կապալառու	Տեխնիկական վերահսկողը
Աղմուկի և թրթռումների կառավարում	Շինաշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին, չափազրույմներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական	Կապալառու	Տեխնիկական վերահսկողը

		գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փողքի բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը: - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:		
Մանկապարտեզի տարածքի բարեկարգում/կանաչապատում		- Տարածքից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը: - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները: - Մաքրել տարածքը կենցաղային և այլ աղբից: - Մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները: - Ձեռնարկել վնասված փողքի հողակտորների կանաչապատում սիզամարգի տեսքով և խոտածածկի պահպանումը և մոնիթորինգը բուսականության աճն ապահովելու համար:	Կապալառու Կապալառու Մանկապարտեզի տնօրինություն/	Տեխնիկական վերահսկողը

**Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1,2%*

8. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	(ո՞վ է իրականացնում մոնիթորինգը)
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Վերահսկող խորհրդատու (ՎԽ)
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինանյութերի և թափոնների տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	ՎԽ Երևանի քաղաքապետարան (ԵՔ)
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս՝ Երևան քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում	Մանկապարտեզի տարածք	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	ՎԽ
Ներշենքային կոնստրուկցիաների	- Քանդման ընթացքում ջրցան - Քանդման մնացորդները ըստ	Մանկապարտեզի տարածք	Գործընթացների գործունեության	Քանդման ընթացքում	ՎԽ

քանդում	առաջաց ման ընդհանուր շինադրի հետ տեղափոխում են քաղաքապետարանի կողմից հատկացված վայր - փայտե կոնստուկցիաներ, մետաղական մասերի և խողովակների օգտագործում շինարարության ընթացքում		ստուգում		
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Մանկապարտեզի տարածք	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	ՎԽ ԵՔ
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - Երևանի քաղաքապետարանի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	ՎԽ ԵՔ
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	ՎԽ ԵՔ
Տարածքի բարեկարգում (ըստ անհրաժեշտության)	Վերականգնել իրականացվող գործունեության արդյունքում վնասված կանաչ տարածքները	Մանկապարտեզի տարածք	Ստուգայցեր	Շահագործման փուլ	ԵՔ, մանկապարտեզի տնօրինություն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- <http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/PublicDocuments/1310049.pdf>
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- www.arlis.am
- www.atdf.am
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիանների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:

**ՇԻՆ. ՄՈՆԻՏԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԴՐԱՖԻԿ
ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՄԱԿԻ**

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՄԻՍՆԵՐ																			
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1	ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	■																			
2	ՔԱՆԴԱՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	■	■	■																	
3	ԾԱԾԿԵՐԻ, ՊԱՏԵՐԻ ԼՔԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՄՐԱՑՈՒՄ				■	■	■	■	■	■											
4	ՊԱՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ					■	■	■													
5	ՄԻՋՆՈՐՄՆԵՐ						■	■	■		■	■	■								
6	ՀԱՏԱԿՆԵՐՆԵՐ								■	■	■		■	■	■			■	■		
7	ՏԱՆԻՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ								■	■											
8	ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ և ԴԻՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ										■	■	■								
9	ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ										■	■	■	■	■	■	■	■	■	■	■
10	ԷԼԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ									■	■		■	■							■
11	ՄԱՆ. ՏԵԽ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ										■	■	■	■							
12	ՄԵՏԱԴԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄՈՆԻՏԺՈՒՄ									■	■										
13	ԱՆՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆԻՏԺՈՒՄ																■			■	
14	ՀՐԳԵՀԱՄԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆԻՏԺՈՒՄ																	■			■
15	ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ և ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																			■	■



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «20» Հուլիսի 2017 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ԵՐԵՎԱՆԻ Հ.118 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՈԱԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Նոր-Նորք Վիլյուսի փողոց 121

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Գույքի անհատույց օգտագործման պայմանագրեր 14.07.2017թ. թիվ 1621, Երևանի քաղաքապետի 27.06.2016թ. թիվ 2347-Ա որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-008-0304-0005

Մակերեսի չափը (հա)՝ 0.74325

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հապարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Վկայական N 20072017-01-0084, գաղտնաբառ՝ 3ZYFERALSV7G

Էջ 1

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	01-008-0304-0005-001	թիվ 25 մանկ ապարտեզ	3120.8 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արսեն Մալխասյան
զբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր



Վկայական N 20072017-01-0084, գաղտնաբառ՝ 3ZYFERALSV7G

էջ 2



գՁԼ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱՆԱՏԱԿԱԳԾԱԲԸ ԱՌԱՋԱՂԴՆՔ)**

N 01/18-07/2- 15704 - 132

* 12 * 03 2021թ.

Օրինվող	Երևանի հ. 118 մանկապարտեզի շենքի սեյսմազինվածության բարձրագույն և հիմնանորոգման
(օրինվող անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործածական նշանակության փոփոխություն)	
Աշխատանքային նախագիծ (բարձր օրնախառնության օրենքով IV կատեգորիա) նախագծային փաստաթղթերի մշակման համար	
(հանկրճ բնորոշումը, հորոշումը, օրնախառնության աստիճանը (կատեգորիան), միասնական փուլերը և այլն)	
Գտնվելու վայրը	Լճոր-Լճոր վարչական շրջան, Վիլյուսի փողոց հ.121
(վարչական շրջանը, փողոցը, շենքի համարը, հողամասի ծանկագիրը)	
Կառուցապատող	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարություն և բարեկարգման վարչության /օգտագործող Երևանի հ.118 մանկապարտեզ ՀՈԱԿ/
(կազմակերպություն անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, ծննդատեղանի և անունը)	
Առաջարկումը տրամադրում է հիմքը	Կառուցապատողի՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարություն և բարեկարգման վարչության պլ. Գ.Հարությունյանի հայտը, «Մեյսիսի պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից 16.04.2018թ. տրվ. մասնագիտական եզրակացությունը, առաջարկ գույքի սեփականության իրավունքի գրանցման 10.08.2006թ. հ.2224 վկայականը, նախատեսվող աշխատանքների տեխնիկական բնութագիրը:
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, առաջարկ գույքի փոփոխում իրավունքը նախատեսվող աշխատանք փաստաթղթեր)	
Առաջարկումը գործողության ժամկետը	Երկու տարի:
(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)	
Ն Ա Մ Ա Գ Չ Վ Ո Ղ Հ Ո Ղ Մ Ս Մ Ի Բ Լ ՈՒ Թ Վ Ե Ր Ը	
(աստղակիշիվ (*) նշված դրույքների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)	
1.Հողամասը գտնվում է	Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործածական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագիրը
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, հողա նպատակային և գործածական նշանակությունը)	
2.(*) Հողամասի չափերը	0.74325 հա
(հողամասի սահմանները՝ կադաստրային նշանարժանի, մակերեսը, (հա)	
3. Հողամասի ամօր վիճակը	4345.8 քմ մակերեսով մանկապարտեզ
(տեղանքի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ ջանքերի) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կառավարման, բարեկարգման և այլն)	
4.(*) Տրամադրված սահմանները	Վիլյուսի փողոց, Երեւանի մանկապարտեզ
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրամադրման մասնագիտական և այլն)	
5.(*) Իմ ծնունդից սկսած ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կայան, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)	Նախագիծը և կից տարածքներով առկա ինժեներական գծերի հաղորդակցությունը:
(ճանապարհի հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքներ, այդ թվում՝ ստորգետնյա)	
6.(*) Կից հողամասեր	Ճանապարհ, ավտոտնակներ, ագատ տարածք:
(կից հողագործողների անվանումը և հրամայ սահմանները՝ համաձայն ներկայացված պլանային)	
7.Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	Առկա չէ:
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)	
8.(*) Հատակագծային սահմանափակումներ	Չկան:
(անհամաձայն գործող ստանդարտի, պաշտպանվող օբյեկտների իմ ծնունդից սկսած տարածքային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների ճեպագրում սահմանափակումները, այդ թվում՝ սերմնաբույսերը)	
Ն Ա Մ Ա Գ Չ Մ Յ Ի Ն Պ Ա Շ Ա Ն Ջ Ե Ր Ը	
(աստղակիշիվ (*) նշված դրույքների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)	
9.Մասնաբաժնե սահմանափակումներ	Մշակել Վիլյուսի փողոց հ.121 հասցեով գտնվող հ.118 մանկապարտեզի, սեյսմազինվածության բարձրագույն և հիմնանորոգման աշխատանքային նախա առաջարկ գույքի սեփականության իրավունքի գրանցման 10.08.2006թ. հ.22 վկայականով ամրագրված հողատարածքի սահմաններում:
(նշելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ-ակտային փաստաթղթերի պահանջները, ամօր քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույքները՝ հրամայ քաղաքաշինական միջավայրի պայմանները, առաջարկությունների մակարդակը, տարածքի, արտաքին դր. պատմամշակութային համապատասխանության և գոյության լուծումների վերաբերյալ)	
9.1. (*) օբյեկտի հետազոտությունը կարմիր գծից (մետր)	---
9.2. (*) հետազոտությունը հարևան հողատարածքներից (օբյեկտներից) (մետր)	---
9.3. Թույլտվության բարձրությունը (մետր)	Պահպանել առկա մասնաշենքերի հարկայնությունը:
(սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՀ, II-6,02-2006 «Մեյսիսի պաշտպանության շինարարության Նախագիծ» և շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային միջոցներ, սեյսմապայմանական բարձրագույն միջոցառումներ և այլն)	
9.4. կառուցապատման խտության գործակիցը	---
(կառուցի (կառուցվածքի) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)	
9.5. կառուցապատման տոկոսը	---
(կառուցապատման (ամբողջական) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	
9.6. կառուցապատման տոկոսը	---
(կառուցապատման տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	

- Հատկացված լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվ տեխնոլոգիական պահանջները:
- Նախագծի կոնստրուկտորական մասը մշակել իրավասու կազմակերպության կողմից նախապես տրամադրված եզրակացության հանձնարարականների և պահանջների համաձայն:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների ենթակամությունը		
11. Ստորգետնյա, կիսամկնդրի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները		
12. (*) Իմօններական ցանցեր և սարքավորումներ		Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում	(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)	
12.2. (*) էլեկտրամատակարարում	(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)	
12.3. (*) գազամատակարարում	(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)	
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մատակարար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադրիչը	(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետի հետևանքով ելակետային տվյալների)	
12.5. քույլ հոսանքներ		
12.6. աղբահանություն		
13. Տարածքի իմօններական մախապատրաստում		Կազմակերպել տարածքի ջրանեռացում: (տեխնիկական պայմաններ, ջրանեռացման, իմօններական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում		Գառնուցապատմանից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել, հնարավոր նախատեսել ցանկապատում և պարսպապատում: (ամրացված պլանովորման վերաբերյալ պահանջները, կամ պաշտպանում, ճարտարապետական փաթեթ ձևեր, ցանկապատում, զգվազ և այլ)
15. Երկնաքանդակ մյուսեր		Երկաքանդակ, մետաղ, ապակի, բարձր շարժ, երեսապատման բարձրորակ նյութեր: (շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տարիներ, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ		Նախատեսել արտակարգ իրավիճակներում պաշտպանության միջոցառումներ: (արտակարգ իրավիճակներում մարզկենտրոնի օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ		Նախատեսել հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցներ: (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և քնակաշարժ անկախաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ		Նախատեսել հաշմանդամների և ՔԱՄ-երի ֆենսադորմանտության ապահովում ուղղված միջոցառումներ՝ նախագծումը (սարքավորման և կանաչապատման ընտրություն կատարելով ՀՀԸՄ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Երեքերի և շինությունների մատակարարությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար» շինարարա-նորմատիվ փաստաթղթերի պահանջների համապատասխան:
19. Երթակա միջավայրի պահպանում		
20. Երկնաքանդակ կազմակերպում		(ըջակա միջավայրը վառվող ազդեցությունից քաղաքում միջոցառումները) Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ենթակետի և 4.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանի 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը		Երկու տարի, մեկ փուլով՝ «Աշխատանքային նախագիծ»: (Ընկերությունն առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)
Լ Դ Ս Ց Ո Ւ Ց Ի Չ Պ Ա Ց Մ Ա Ն Ն Ե Ր		
22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը ներկայացվող պահանջներ		ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ համալիր փորձաքննություն
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության մասին կամ մատուցողի կողմից կատարվող փորձաքննությունը)		
23. Միջանկյալ համաձայնեցում		(իրավասու մարմին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգիռ մարմինների կողմից նախագծի նախնական համաձայնեցում, ելույթ է ելն առաջադրանքի փուլերի մասին հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)
24. Հասարակական քննարկումներ		(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
25. Համաձայնեցումներ		• Համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ:
(Ընկերությունն ավել օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հաշվառման նկատմամբ իրավունքներ ու իրավունքներ պահպանության և այլ լրացուցիչ մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 36-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)		
26. Փոստային բաժանորդային պահպանման տեղադրում		
27. Այլ պայմաններ		Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանին՝ հետևելով հետևյալին՝ հետևելով հաստատված դրույթներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Կ.Տ.

Կատ. Ա. Նախկին
Բանալի՝ 1960158



Հ ՄԱՐԴՈՒԹՅԱՆ